ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

22 ՄԱՐՏԻ 2022 թ.

№ 4 (1083)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 57-րդ տարի

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Մանկավարժական համալսարանի 19-րդ ռեկտորը Սրբուհի Գևորգյանն է

Մարտի 19-ին Մանկավարժական համալսարանում կայացավ Հոգաբարձուների խորհրդի նիստը, որի օրակարգում ռեկտորի ընտրության հարցն էր: Նիստը վարում էր ԿԳՄՍ նախարարի տեղակալ, Խորհրդի նախագահ Ժաննա Անդրեասյանը:

Հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, բուհի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Սրբուհի Գևորգյանն առաջարդրված միակ թեկնածուն էր: Նա ներկայացրեց ՀՊՄՀ զարգացման գործողությունների իր ծրագիրը՝ առաջիկա տարիների տեսլականը:

Սրբուհի Գևորգյանը ներկայացրեց բուհի զարգացման առաջնահերթությունները, անդրադարձավ առկա բացթողումներին ու դրանց համատեքստում կատարվելիք այն բովանդակային քայլերին, որոնք կտանեն մանկավարժական կրթության զարգացմանն ու մանկավարժական կադրերի պատրաստման որակի բարձրացմանը:

«Արագ զարգացող աշխարհը ենթարկվել է տրանսֆորմացիայի, տրանսֆորմացիայի է ենթարկվել նաև կրթական համակարգը, ուստի մանկավարժական կրթությունը լուրջ բարեփոխումների կարիք ունի, և մեր բոլոր քայլերը պետք է միտված լինեն նոր գիտակրթական ծրագրերի մշակման և իրականացման միջոցով մանկավարժական կրթության ճգնաժամի հաղթահարմանը»,- ասաց Ս. Գևորգյանը:

Այդ համատեքստում զեկուցողն անդրադարձավ դիմորդների թվի նվազման օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներին, ընդունելության կազմակերպման այլընտրանքային փաթեթի մշակման անհրաժեշտությանը, դասախոսական կազմի վերապատրաստմանը, հետազոտող ուսուցչի խնդրին և մի շարք այլ կարևոր հարցերի, որոնց իրականացման համար Մանկավարժական համալսարանը պետք է հանդես գա գաղափարական նոր մոտեցումնե-

➢2

ՈՒՍՈՒՑԻՉ ԴԱՌՆԱԼՈՒ ԵՐԱԶԱՆՔՆ ԱՅԼԵՎՍ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Է

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ համալսարանի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Սրբուհի Գևորգյանը մարտի 7-ին պետական ավարտական գերազանցության դիպլոմներ հանձնեց 2021-22 ուսումնական տարվա հեռակա ուսուցման համակարգի 13 մագիստրոսի. շրջանավարտների ընդհանուր թիվն այս տարի 80-ն է:

ՇԱՀԱԳՐԳԻՌ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Մանկավարժական համալսարանում հյուրընկալվել էր Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ներկայացուցչական կազմը՝ ծանոթանալու համալսարանի «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի գործունեությանը:

Կլոր սեղանի շուրջ տեղի ունեցավ շահագրգիռ քննարկում ՀՊՄՀ «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի ղեկավար կազմի հետ:

«Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի գործունեության և ամրագրած հաջողությունների մասին ամփոփ տեղեկատվություն ներկայացրեց «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի գիտական ծրագրի ղեկավար, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Վահան Սարգսյանը:

Նա հատկապես կարևոր ձեռքբերում համարեց «Էգոսկոպ» համալիրը, որի միջոցով իրականացվում են գիտական հետազոտություններ, հոգեբանական վերլուծություններ և թեստավորում, միաժամանակ կարևորեց Շախմատի միջազգային ֆեդերացիայի հետ համագործակցությունը:

Սարքի մասին առավել հանգամանորեն խոսեցին ինստիտուտի գիտաշխատողները. «Էգոսկոպ» համալիրը հնարավորություններ է ընձեռում կիրառել փորձարկվողի վարքային, հետազոտական արդյունքների գնահատման մեխանիզմները:

Այնուհետև գործնական խոսակցություն ծավալ-

➢2

ԵՂԻՔԵ ՉԱՐԵՆՑ -125

Լուսամփոփի պես աղջիկ՝ աստվածամոր աչքերով,
Թոքախտավոր, թափանցիկ, մարմնի՜ պես երազի,
Կապո՛ւյտ աղջիկ, ակաթի ու կաթի պես հոգեթով,
Լուսամփոփի՜ պես աղջիկ...
Ես ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ, որ չմեռնի իմ հոգին,
Որ չմարի իմ հոգին քո ակաթե աչքերում,
Ես ի՞նչ անեմ, որ մնա ծիածանը երեք գույն,
Որ չցնդի, չմարի՜ իմ հոգու հեռուն...
Լուսամփոփի՜ պես աղջիկ՝ աստվածամոր աչքերով,
Թոքախտավոր, թափանցիկ, մարմնի՜ պես երազի,
Կապո՛ւյտ աղջիկ, ակաթի ու կաթի՜ պես հոգեթով,
Լուսամփոփի՜ պես աղջիկ...

ՍԻՐԵԼԻ՛ԿԱՆԱՅՔ ԵՎ ԱՂՋԻԿՆԵՐ

Գարունը նոր կյանքի սկիզբ է, հույսի ու հավատի ավետաբեր: Ցավոք այս վերջին տարիները տարբեր մարտահրավերների դիմակայելու ժամանակաշրջան էին, որ պատերազմի ու համաճարակի տագնապներով լցրին յուրաքանչյուրի սիրտը՝ պատճառելով ցավ, տառապանք, թախիծ, բայց նաև տալով պայքարելու կամք, հզորանալու և միասնական բռունցք դառնալու ձգտում:

Մարտահրավերների այս անհասկանալի դարում ավելի ու ավելի ենք հասկանում, որ բարությունն ու գեղեցկությունը կարող են ընդվզել աշխարհի չարի ու բռնության դեմ, մայրական ջերմությամբ ու կանացի քնքշությամբ արթնացնելով աշխարհի քնած խիղճը: Քանզի խելացիները վաղուց հասկացել են, որ «միայն կինը կարող է ժամանակավորապես կանգնեցնել ժամանակը», որովհետև «բնությունը կնոջն ստեղծել է հմայիչ, իմաստուն ու շրջահայաց»:

Մանկավարժական համալսարանի սիրելի՛ կանայք և աղջիկներ, թող յուրաքանչյուր գարուն ձեզ աշխատելու և ստեղծագործելու, արարելու և նվիրվելու մեծագույն կամքով օժտի, թևեր տա ձեր ցանկությունների մարմնավորմանը, ուսուցչի կերտման ճանապարհին ձեր նվիրումը ապրելու կերպ դարձնի և անսահման խաղաղություն ու երջանկություն պարգևի ձեր ընտանեկան հարկին:

Մարտի 8-ից մինչև ապրիլի 7 ձգվող գարնանային միամսյակը թող գարնանային խիզդով լցնի յուրաքանչյուր մանկավարժի օջախ, կրթության լույսով պարուրի հայ մանուկին, պատանուն, երիտասարդին, որոնք մեր հայրենիքի շենացման ու հզորացման սյուներն են:

Մանկավարժական համալսարանի 19-րդ ռեկտորը Սրբուհի Գևորգյանն է

➢1 րով ու ակտիվ նախաձեռնողականությամբ:

Ռեկտորի թեկնածուն հանգամանորեն պատասխանեց իրեն ուղղված բոլոր հարցերին, որոնք վերաբերում էին ուսուցչի որակի կատարելագործմանը, շրջանավարտների հետ կապին, դասախոսների՝ օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացմանը և ուսումնառության որակի ապահովմանը, հետազոտական ձեռքբերումները դպրոց հասցնելու ուղիներին, համընդհանուր ներառականությանը, միջգիտակարգային հետազոտություններին և այլն:

Փոխնախարարը խոսեց մանկավարժական կրթության որակի բարձրացմանն ուղղված քայլերի, կրթական համակարգի ու դպրոցների առջև ծառացած խնդիրների մասին, որոնց լուծումն անվերապահորեն պայմանավորված է պետության և բուհի համագործակցությամբ, նաև անդրադարձավ մանկավարժի մասնագիտությունը գրավիչ դարձնելու և որպես հետևանք՝ արդյունքում որակյալ ուսուցիչ ունենալու օրակարգային հիմնախնդրին: Այս և այլ խնդիրների լուծման և մարտահրավերներին դիմակայելու հարցում բուհը պետք է ունենա պետության աջակցությունը:

Ժ. Անդրեասյանը կարևորեց Մանկավարժական համալսարանը որպես ռազմավարական բուհ, նաև արժևորեց՝ համալսարանի դասախոսները պատասխանատվության այդ գիտակցումով են աշխատում:

«Պետք է մշակվի հատուկ պետական քաղաքականություն, որպեսզի բուհի հետ համակցված գործունեությամբ իրականացվեն մանկավարժական կրթության զարգացմացմանն ուղղված հաջորդական քայլերը,-ասաց Ժ. Անդրեասյանը,- մենք սկսել ենք այդ ճանապարհով գնալ»:

Նա հավելեց՝ Մանկավարժական համալսարանին առաջիկայում կներառեն ուսուցիչների կամավոր ատեստավորման գործընթացում, իսկ ոլորտի կառույցների հետ համագործակցությունը կլինի շարունակական:

Նախարարի տեղակալը համոզված է՝ ոչ թե կոսմետիկ, այլ էական փոփոխություններ պետք է անել:

Ելույթ ունեցան նաև խորհրդի անդամներ պրոֆեսորներ Էդվարդ Ղազարյանը, Լեմս Ներսիսյանը, Սամվել Պիպոյանը, Համլետ Հարությունյանը, խորհրդի քարտուղար Կամո Վարդանյանը և ուսանողական համակազմից՝ Համլետ Պետրոսյանը: Նրանք խոսեցին ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատարի բարձր պատրաստվածության մասին՝ վստահ, որ նրա ղեկավարմամբ համալսարանը մեծ հաջողություններ կամրագրի:

Անցկացվեց փակ, գաղտնի քվեարկություն, որի արդյունքներով, 19 ձայնով, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը միաձայն ընտրվեց Մանկավարժական համալսարանի ռեկտոր: Խորհրդի 20 անդամներից մեկի քվեաթերթիկը ճանաչվեց անվավեր՝ սխալ նշման պատճառով: Համալսարանի ողջ գոյության ընթացքում Սրբուհի Գևորգյանն առաջին կին ռեկտորն է, թվով 19-րդը:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ և համալսարանի Խորհրդի նախագահ Ժաննա Անդրեասյանը շնորհավորեց նորընտիր ռեկտորին և վստահեցրեց. «Խորհուրդը Ձեզ հետ գործելու է որպես մեկ թիմ: Ձեր հաջողությունները մեր հաջողություններն են»:

Սրբուհի Գևորգյանը շնորհակալություն հայտնեց վստահության դրսևորման համար՝ հավելելով, որ դա ոչ միայն շատ պատվաբեր է, այլև պարտավորեցնող: ՀՊՄՀ նորընտիր ռեկտորը վստահեցրեց՝ բուհն ունի այն պրոֆեսորադասախոսական ներուժը, որը կկարողանա հաղթահարել մանկավարժական կրթության առջև ծառացած մարտահրավերները:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐԻ ՀԵՏ

ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Սրբուհի Գևորգյանը մարտի 3-ին հանդիպեց ՀՀ ԿԳՄՍ նախարարության անցկացրած «Լավագույն ուսանող-2021» մրցույթում հաղթող ճանաչված Մանկավարժական համալսարանի 4 ուսանողներին:

«Ուրախ ենք, որ դուք նախընտրել եք Մանկավարժականը, ձեր գործունեությունը կապել մեր համալսարանի հետ, որը օրինակ կարող է լինել մյուս ուսանողների համար»,-ասաց Ս. Գևորգյանը:

Ուսանողների մեկնաբանություններն անկեղծ էին:

«Ավագ դպրոցից ինձ համար արդեն պարզ դարձավ, որ ես պիտի ընդունվեմ Մանկավարժական համալսարանի Պատմության և հասարակագիտության ֆակուլտետ, քանի որ ես հաղթեցի ֆակուլտետի կազմակերպած օլիմպիադայում և իրավունք ստացա վարձավճարի 50 տոկոս զեղչով սովորել այդ ֆակուլտետում»,-ասաց Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրս ուսանողուհի Հասմիկ Ղռմաջյանը:

Թվում է, թե երեկ էր, որ ինքն աշակերտ էր, իսկ այսօր արդեն աշխատում է Մայակովսկու անվան դպրոցում, իր գիտելիքները փոխանցում դպրոցականներին:

Աննա Դավթյանը սովորում է համալսարանի Բանասիրական ֆակուլտետի մագիստրատուրայի 2-րդ կուրսում: Ակտիվ ու նախաձեռնող ուսանողուհի է, ուսման առաջատար: Նա վստահեցրեց, որ սերն ու գնահատված լինելու զգացողությունն իրեն մղեցին մասնակցելու մրցույթին:

«Եթե գործդ սիրով ես անում՝ անպայման հաջողում ես»,-ասաց Աննան, ում առաջնորդողի և առաջատարի դերը մշտապես օգնում է ուսման մեջ հաջողություններ գրանցել:

Սկզբնական կրթության ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրով 4-րդ կուրսի ուսանողուհի Ջուլիետա Մանուկյանն իր ուսումնական հաջողությունները կապում է համալսարանի դասախոսների հետ, որոնցից որևէ մեկին դժվարանում է առանձնացնել: Նա ամենուր հպարտությամբ ասում է, որ Մանկավարժական համալսարանի ուսանող է:

Մյուս լավագույն ուսանողուհին Տաթև Թամրազյանն է:«Այս մրցույթն ինձ համար ոչ թե նպատակ էր, այլ արդյունք»,-անթաքույց հպարտությամբ ասաց Տաթևը, ով իր հաջողությունների հիմքը համարում է ՀՊՄՀ ավագ դպրոց-վարժարանում ստացած կրթությունը:

«Յուրաքանչյուր ուսանող, ով իր ճակատագիրը կապել է Մանկավարժականի հետ, ինքն է տալիս բուհի գնահատականը՝ որքանով է այն ազդեցություն թողել իր գործունեության ու կյանքի առաջընթացի վրա: Մենք նույն գործընթացի մեջ ենք, բայց բարիկադի տարբեր կողմերում»,-ասաց Ս. Գևորգյանը՝ ընդգծելով, որ Մանկավարժականն առաջընթացի ճիշտ ուղի է որդեգրել, մասնագիտական լավ ներուժ ունի և անչափ կարևոր է այն դասախոսի դերը ուսանողի կյանքում, որը վերջինիս համար բարձր չափանիշի խորհրդանիշ է:

Սրբուհի Գևորգյանը շնորհավորեց լավագույն ուսանողներին ու դասախոսներին, որոնց խստապահանջության շնորհիվ են նաև հաջողությունների հասել, և վստահեցրեց, որ ուսանողի կարծիքն ամենակարևորն է՝ ընդգծելով, որ Մանկավարժական համալսարանը շարունակելու է երկխոսությունը լավագույնների հետ՝ խրախուսելով ու տարածելով նրանց օրինակը:

Միլվա ԱՍՐՅԱՆ

ՇԱՀԱԳՐԳԻՌ ՔՆՆԱՐԿՈՒՄ

➢1 վեց շախմատ-սպորտ առնչությունների շուրջ: Հյուրերին հետաքրքրում էր մարզիկների պատրաստվածությանն ու մարզական ցուցանիշներին շախմատի առնչությունը. շախմատով զբաղվելը ի՞նչ դեր ու ազդեցություն կարող է ունենալ մարզիկների վրա:

Վահան Սարգսյանը փաստեց, որ Մանկավարժական համալսարանում հետազոտությունները կատարվում են՝ հենվելով շախմատի կրթական բաղադրիչի վրա, որ կարելի է նաև դիտարկել սպորտի, ֆիզիկական պատրաստության հետ շախմատի առնչությունները:

Ներկաները փաստեցին՝ շախմատը մեծ էներգիա է պահանջում, կարելի է համեմատական ուսումնասիրություններ կատարել՝ ինտելեկտուալը ինչպես է օգտագործվում սպորտում:

«Մենք շախմատի կրթական կողմին ենք առանձնակի ուշադրություն դարձնում. հետազոտական կրթական գործընթացներ ենք իրականացնում՝ ինչպես է ազդում շախմատը մյուս առարկաների վրա կամ արդյո՞ք ազդեցություն ունի»,-ասաց ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատար, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը:

Երբ Մանկավարժական համալսարանում բացվեց «Շախմատ» գիտահետազոտական լաբորատորիան, այնուհետև նրա հիմքի վրա՝ «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտը, իսկ 2011 թվականից շախմատը որպես առարկա մտավ հանրակրթության ոլորտ, այն միանշանակ չընդունվեց:

Կլոր սեղանի մասնակից հոգեբանները փաստեցին, որ տարիների ընթացքում բոլորը համոզվեցին, որ շախմատը դրական ազդեցություն է թողնում երեխայի մտքի ու հոգեբանության վրա, օգնում է կենտրոնանալ, զարգացնում է տրամաբանությունը, նպաստում է ուսման առաջընթացին, համագործակցային, ընկերային, այլ հատկանիշներ է ձևավորում:

Ներկաները հանգամանորեն խոսեցին հոգեբանական, սոցիոլոգիական, ներառական տեսանկյունից իրականացված հետազոտությունների արդյունքների մասին, թեև ըստ Վ. Սարգսյանի, ներառականության ուղղությամբ դեռևս որոշակի գործիքակազմ չկա:

Վերջինս նաև փաստեց, որ մշակված թեստերի միջոցով հետաքրքիր օրինաչափություններ են բացահայտել՝ կապված իմացական գործընթացների, ռեֆֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի պատվիրակները հետաքրքրվեցին մրցակցային արդյունքների վրա շախմատի հնարավոր ազդեցությամբ:

Սկզբնական կրթության ֆակուլտետի դեկան Հեղինե Խաչատրյանը հավելեց, որ հետազոտություններում ավելի շատ շեշտադրվում է արժեքային համակարգի, հմտությունների ու հնարավորությունների, քան մրցակցության տեսանկյունից:

«2012 թվականից Մանկավարժականն սկսեց շախմատի ուսուցիչներ պատրաստել: Տարիների հետ վերապատրաստվող մանկավարժների համար բազմաթիվ մեթոդներ մշակեցինք, որպեսզի մանկավարժը երեխաների ճիշտ ուղիով տանի»,-ասաց դոցենտի պաշտոնակատար Սամվել Միսակյանը:

«Անհամամատելի է այն, ինչ ունեինք, երբ սկսեց գործել «Շախմատ» գիտահետազոտական լաբորատորիան, և այն, ինչ ունենք այսօր,-ամփոփեց «Շախմատ» գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն Սմբատ Լպուտյանը:- Շախմատ գիտահետազոտական ինստիտուտի աշխատանքային թիմը բավականին հաջողություններ ունի այս ոլորտում. հետազոտական վերլուծությունների ու անընդհատ մշակվող նոր մեթոդների արդյունքները առաջիկայում ավելի տեսանելի կլինեն»:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Միջազգային գիտաժողով

Մեսրոպ Մաշտոց–1660

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ֆակուլտետը և Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնը մարտի 10-11-ը կազմակերպել էին երկօրյա միջազգային հայերենագիտական գիտաժողով՝ նվիրված Սուրբ Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1660-ամյակին:

Գիտաժողովին մասնակցում էին գիտնականներ, մտավորականներ ոչ միայն Հայաստանից և Արցախից, այլև հեռավար հարթակի միջոցով նաև ԱՄՆ-ից, Գերմանիայից, Եգիպտոսից, Երուսաղեմի հայոց պատրիարքությունից:

Գիտաժողովը բացեց Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բգդ, պրոֆեսոր Վազգեն Համբարձումյանը: Նա ողջունեց գիտաժողովի մասնակիցներին և խոսեց հայոց լեզվի և նրա դասավանդման ամբիոնի ավանդույթների մասին:

Վերջին հինգ տարիների ընթացքում ամբիոնը կազմակերպել է միջազգային լայն ընդգրկում ունեցող 5 գիտաժողով: Ներկա գիտաժողովին էլ մասնակցում են ոչ միայն գիտական մեծ ճանաչում ունեցող դասախոսներ, այլև մագիստրատուրայի ուսանողներ:

Պրոռեկտոր Մարիամ Իսպիրյանը համալսարանի ղեկավարության անունից ողջունեց գիտաժողովի մասնակիցներին՝ կարևորելով միջոցառման անցկացման յուրահատուկ խորհուրդը՝ հայ դպրոցի կայացման ու զարգացման գործում ընդգծելով հայերենի առաջին ուսուցիչ Մեսրոպ Մաշտոցի ու հայոց գրերի դերն ու նշանակությունը:

«Այսօր ավելի քան մեզ պետք է ուժեղ դպրոց, կայուն արժեհամակարգ ունեցող հասարակություն և կայացած կրթական համակարգ»,-ասաց պրոռեկտորը՝ գիտաժողովի մասնակիցներին մաղթելով հաջողություն և շահագրգիռ քննարկումներ:

ՀԱՅՈՑ ԳՐԵՐԸ ԵՎ ՀԱՅ ԴՊՐՈՑԸ



Բացման խոսքով հանդես եկավ նաև Բանասիրական ֆակուլտետի դեկան, բանասիրական գիտությունների դոկտոր Աշոտ Գալստյանը: Նա կարևորեց երկօրյա հայերենագիտական գիտաժողովի միջազգային աշխարհագրությունն ու ընդգրկունությունը՝ փաստելով, որ 44 զեկուցողների մեջ են նաև արտասահմանյան 4 երկրներից, Գևորգյան ճեմարանի և Վազգենյան դպրանոցի սաներ, ինչպես նաև մագիստրատուրայի սովորողներ. վերջինների համար Մաշտոցյան գրերին և հայ դպրոցին նվիրված գիտաժողովը լավագույն հարթակն է գիտական հետագա պրպտումների համար:

Լիագումար նիստում ներկաները լսեցին պրոֆեսոր Վ. Համբարձումյանի «Հայերենի պայթական ձայնեղների հնչաբանական արժեքը մեսրոպյան գրանշանների համակարգում», պրոֆեսոր Ա. Դոլուխանյանի «Մորուս Հասրաթյանը մաշտոցյան գրերի մասին» և ԵՀՊ դիվանապետ (Իսրայել) Կորյուն վարդապետ Բաղդասարյանի «Հայ դպրոցի պատմությունը Սուրբ երկրում» խորագրով զեկուցումները:

«Հայերենի պայթական ձայնեղների հնչաբանական արժեքը մեսրոպյան գրանշանների համակարգում» զեկույցում ՀՀ ԳԱԱ (ԼԻ), պրոֆեսոր Վազգեն Համբարձումյանը դիտարկեց մաշտոցյան այբուբենում բ, գ, դ-ի լիարժեք ձայնեղ լինելու հարցը՝ մեջբերելով հարցի վերաբերյալ ականավոր լեզվաբանների մի շարք տեսակետներ՝ դեռևս 19-րդ դարից սկսած. «Սուրբ Մեսրոպ Մաշտոցը շրջագայել է հայկական մի շարք բնակավայրերում և պարզել, որ հայ մարդու արտասանական ապարատում ձայնեղների արտասանությունը ոչ միշտ է նույնը: Հայերենի պայթական բաղաձայների վերանայման մասին դեռևս 1904 թվականին խոսել է դանիացի նշանավոր լեզվաբաններից մեկը՝ առաջարկելով վերանայել այն և համոզված լինելով, որ դա կլինի հեղաշրջում ու կնպաստի համաշխարհային լեզվաբանության մեջ հնդեվրոպական լեզուների ուսումնասիրմանը»:

Պրոֆեսորը ներկայացրեց տեսության վերբերյալ համաշխարհային ականավոր այլ լեզվաբանների կարծիքներ ևս՝ ընդգծելով՝ հնդեվրոպական լեզուներից քչերն ունեն նման հատկություն. հայերենը լուսանցքային լեզվից պետք է վերածվի առաջնայինի՝ նպաստելով հնդեվրոպական նախալեզվի պայթական բաղաձայնական համակարգի վերանայմանը: Ամփոփելով իր ելույթը՝ պրոֆեսորը հավելեց, որ այդ գաղափարի կրողն է եղել նաև Մանկավարժականի հիմնասյուններից մեկը՝ մեծ լեզվաբան Արարատ Ղարիբյանը:

«Մորուս Հասրաթյանը մաշտոցյան գրերի մասին» զեկուցման մեջ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր Աելիտա Դոլուխանյանն անդրադարձավ մաշտոցյան գրերի վերաբերյալ պատմաբանի այն տեսակետներին, որոնք նորույթ են և տարբերվում են լեզվաբանների հնչեցրած կարծիքներից: Աելիտա Դոլուխանյանն իր զեկույցում ներկայացրեց Մեսրոպ Մաշտոցի ծագման, կրթության, հոգևորական դառնալու վերաբերյա Մորուս Հասրաթյանի տեսությունը՝ ընդգծելով, որ ականավոր պատմաբանը մաշտոցյան գրերի ստեղծումը համարում է 395 թվականը.«Մեսրոպ Մաշտոցն ունեցել է միջազգային հեղինակություն.այլ կերպ հնարավոր չէ բացատրել նրա միջնորդությամբ Հայաստանի բյուզանդական մասում հայկական դպրոցների հիմնումը, աղվանական, վրացական այբուբենների ստեղծումը, մի շարք լեզուներով Աստվածաշնչի թարգմանությունը: Մաշտոցն իր պետականամետ գաղափարը շարունակեց նաև հոգևորական լինելու շրջանում ևս»:



Բանախոսն իր ելույթում անդրադարձավ նաև հայ և եթովպական գրերի նմանությանը՝ պատահական չհամարելով, որ երկուսի դեպքում էլ եղել է Աստծո նախախնամությունը:

Կորյուն վարդապետ Բաղդասարյանն իր «Հայ դպրոցի պատմությունը Սուրբ երկրում» խորագրով զեկուցման մեջ ներկայացրեց Երուսաղեմի հայ դպրոցի պատմությունը:

Նա մասնավորապես ասաց, որ 19-րդ դարում արդեն Սուրբ երկրում բացվեցին հայ դպրոցներ՝ հավելելով նաև, որ մինչ այդ՝ 7-րդ դարում, Երուսաղեմում եղել են դպրոցներ. այդ մասին է վկայում արաբ պատմագիրը:

«Թե ինչ ճակատագրի են արժանացել հայ դպրոցները, մենք չգիտենք, բայց գիտենք, որ մինչև 19-րդ դարն արդեն գոյություն չուներ ոչ մի հայկական դպրոց Երուսաղեմում: Ջաքարիա պատրիարքն էր, որ Եվրոպա այցելելուց հետո որոշում է Երուսաղեմում ճեմարան բացել: Եվ 1843 թվականին Ռամբլե քաղաքում բացում է Ժառանգաց վարժարանը, այն է՝ ճեմարան, որը երկու տարի անց տեղափոխվում է Երուսաղեմ»,- ներկայացնում է զեկուցողը::

1874 թվականի տեղեկագրերից պարզվում է, թե ինչ առարկաներ են անցել այդ ճեմարանում. դասավանդվել են 10-ից ավելի առարկաներ՝ հին ու նոր կտակարանների պատմություն, բարոյախոսություն, Հայաստանյայց եկեղեցու պատմություն, հին դարերի պատմություն, բնապատմություն, բնագիտություն, թվաբանություն, աշխարհագրություն, գրահաշիվ, գծագրություն (նկարչություն), երաժշտություն, հայկաբանություն, գաղղիերեն և տաճկերեն:

1915 թվականի տնտեսական ծանր վիճակի պայմաններում դադարեցվել է Ժառանգաց վարժարանի գործունեությունը, մեկ տարի անց Սահակ կաթողիկոսը փորձել է վերաբացել այն 3 դասարանով, բայց օսմանցիները բոլոր ուսանողներին 2017 զինվորագրել են և տարել Դամասկոս:

1926 թվականին միայն Եղիշե Դուրյան պատրիարքի նախաձեռնությամբ վերաբացվել է, որի առաջին սաները եղել են մեծ եղեռնի որբերը, որոնք 1922-ին մեծ քարավաններով հասել են Երուսաղեմ և տեղավորվել մի քանի որբանոցներում: Հետագայում այս վարժարանում հրավիրել են դասախոսելու գրականագետ Հակոբ Օշականին և մանկավարժ, իմաստասեր Շահան Պերպերյանին:

1960-1970 թվականներին լուրջ ճգնաժամ է առաջանում հոգևորական կադրերի պատրաստման առումով. հարցը լուծելու համար Սփյուռքի մեծահարուստները և Վեհափառ Հայրապետը որոշում են մի նոր ճեմարան բացել Սփյուռքում՝ հոգևորական կադրերի պատրաստման նկատառումով: Այն բացվում է Երուսաղեմում և մինչև 1991 թվականը Երուսաղեմի Ժառանգաց վարժարանը հոգևորական կադրեր է պատրաստել ողջ Սփյուռքի համար: Այստեղ հետագայում ուսանել են նաև սաներ Հայաստանից:

Զեկուցողը ինքն էլ Հայաստանից է գնացել Երուսաղեմ, ուսանել է և ձեռնադրվել և արդեն 27 տարի շարունակում է իր ծառայությունը:

Հաջորդ բացված վարժարաններից զեկուցողը նշեց Մեսրոպյան արական վարժարանը: Սեռական խտրականությանը տուրք չտալու համար Պատրիարքարանը որոշել է կարգավորել նաև աղջիկների ուսման հարցը: 1862 թ. վանքից ներս բացվում է օրիորդաց վարժարանը: Դա աղջիկների առաջին վարժարանն էր: Կրթական ծրագրում առանցքային առարկաներ էին Հայոց լեզուն և ձեռագործությունը:

1918 թվականին, երբ Երուսաղեմն ազատագրվում է օսմանյանյան տիրապետությունից, այստեղ են գալիս շուրջ 10 հազար գաղթականներ և նրանց երեխաների կրթության հարցը լուծելու նպատակով 1929-ին բացվում է նոր դպրոց՝ Սրբոց թարգմանչաց վարժարան, որն ուներ նախակրթարան և մանկապարտեզ:

1953-ին կառավարությունը բացում է երկրորդական վարժարան՝ ամեն տարի մեկ դասարան ավելացնելով, որպեսզի հայկական ինքնությունը չվտանգվի: 1958-ին երկրորդական վարժարանն ունենում է իր առաջին շրջանավարտները: Այսպիսով հայ երեխաները սովորում էին 3 տարի մանկապարտեզում և

➤6

ՑՅՈՒՐԻԽԻ ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրով սովորող 9 ուսանող՝ 8-ը կերպարվեստի, 1-ը՝ դեկորատիվ կիրառական արվեստի բաժնից, դասախոսներ Հայկուհի Մուկոյանի և Նաիրա Մխիթարյանի ղեկավարությամբ փետրվարի 20-ից մարտի 5-ը մանկավարժական պրակտիկա անցկացրին Շվեյցարիայի Ցյուրիխի արվեստների համալսարանում:

Ինչպես տեղեկացանք, պրակտիկան անցել է հետաքրքիր ու հագեցած ծրագրով. մեր ուսանողներին ծանոթացրել են Ցյուրիխի տեսարժան վայրերին, Ցյուրիխի պատկերասրահին, ժամանակակից արվեստների թանգարանին, Լենզբուրգ քաղաքի թանգարանին:

Շվեյցարացի դասախոսները նախ մեր ուսանողներին ըստ նախասիրությունների բաժանել են խմբերի և ծանոթացրել իրենց ժամանակակից մեթոդներին, որից հետո աշխատել են խառը՝ հայ և շվեյցարացի ուսանողներից կազմված խմբերի հետ:

Հ. Մուկոյանը տեղեկացրեց, որ եղել են Բադեն քաղաքում, ուր շվեյցարացի դասախոսների և ուսանողների ուղեկցությամբ, մեր ուսանողների հետ ավագ դպրոցում մասնակցել են դասալսումների:

«Ըստ նախասիրությունների բաժանված խմբերին շվեյցարացի կոլեգաները ներկայացրին դասերի տարբեր տեսակներ: Նրանց դասավանդման մեթոդների հիմքում ընկած է խմբային աշխատանքը:

Այդ օրը ուսանողները խմբով պատրաստեցին թղթե աշտարակներ, որից հետո լսեցին յուրաքանչյուրի մեկնաբանությունը:

Մյուս խումբը նկարում էր անշարժ, այնուհետև շարժման մեջ գտնվող բնորդին, որից հետո նկարները քննարկեցին՝ լսելով յուրաքանչյուրի կարծիքը:

Երրորդ խումբը թղթերի միջոցով բեմականացման դետալներ էր պատրաստում: Մեր կոլեգաները շեշտը դնում էին ստեղծածի վերլուծության, մեկնաբանությունների վրա՝ դրանով իսկ զարգացնելով սովորողի վերլուծական կարողությունները: Պետք է հավելել, որ բոլոր մեթոդները դրան էին ուղղված»,-ասաց մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Հ. Մուկոյանը՝ հավելելով, որ մեր դասախոսները սովորողների մոտ զարգացնում են ակադեմիական նկարչությունը, իսկ շվեյցարացի կոլեգաները շեշտը դնում են ժամանակակից ավանգարդ նկարչության վրա:

ՀՊՄՀ դասախոս Հայկուհի Մուկոյանը ծանոթացել է իրենց հյուրընկալած համալսարանի բակալավրի կրթական ծրագրին և վստահեցնում է՝ այն մեր բակալավրիական ծրագրի հետ որևէ առնչություն չունի, առկա են կառուցվածքային էական տարբերություններ: Նրանց մոտ ավելի շատ զարգացած են մեթոդները՝ խաղային, խմբային, նախագծային: Նրանք դա են կարևորում և՛ աշակերտի, և՛ ուսանողի համար:

Մեր ուսանողներն ու դասախոսները Բյուլախ և Լյուցերն քաղաքների տարբեր դպրոցների ավագ դասարաններում դասեր են լսել: Դասերին մասնակցել են նաև շվեյցարացի դասախոսները: Դասերց հետո համատեղ քննարկել են դասերի թերությունները, շտկել սխալներն ու բացթողումները, կատարել փորձի փոխանակում: Շվեյցարացի գործընկերների ուշադրության կենտրոնում ուսումնական գործընթացն ու մեթոդներն են եղել:

ՀՊՄՀ դասախոսներ Հայկուհի Մուկոյանը և Նաիրա Մխիթարյանը հանդես են եկել դասախոսություններով. Ն. Մխիթարյանի դասախոսությունը նվիրված էր գորգագործության և կարպետագործության տեխնիկային, իսկ Հ. Մուկոյանինը՝ պատկերագրման ոչ ավանդական տեխնոլոգիաներին:

Մեր համալսարանի ուսանողների և դասախոսների համար հատկապես տպավորիչ է եղել Ցյուրիխի գրականության ինստիտուտում կազմակերպված «Հայերեն այբուբենի ստեղծումը» միջոցառումը:

Մարտի 27-ից ապրիլի 7-ը Ցյուրիխի արվեստների համալսարանի պատվիրակությանը կհյուրընկալեն Մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետում:

Հավելենք, որ երկու համալսարանների միջև համագործակցությունն սկսվել է դեռևս 2019 թվականից, ինչի արդյունքում երկու համալսարանների ուսանողների համար կազմակերպվում են փոխայցելություններ, պրակտիկա, վարպետության դասեր և փորձի փոխանակում:

Սյունիքի գույները

Գեղանկարիչ Լեմս Ներսիսյանը 40 կմ քայլել է Ագարակից մինչև Հորադիզ, նկարել է բոլոր կարևոր գյուղերը, քաղաքները, տեսարժան վայրերը հուշարձանները... Մեղրիի միջանցքն այսօր դարձել է միջազգային խոսակցության թեմա, որը մտահոգում է իրեն, բայց ոչ բոլոր հայերին...

«Ես գտնում եմ, որ հայրենասիրական թեման անհրաժեշտ է մեր ուսանողներին, սա շատ արծարծվող, արդիական թեմա է: Կարծում եմ՝ ուսանողներից շատերը չեն եղել Սյունիքում, և որոշեցի համալսարանում ներկայացնել «Իմ Սյունիք» գեղանկարչական աշխատանքների ցուցահանդեսը»,-ասաց գեղանկարիչ Լեմս Ներսիսյանը՝ վստահ, որ ուսանողներն իր գեղանկարների միջոցով կճանաչեն Սյունիքը:

Ցուցահանդեսը նախ և առաջ տեղեկատվական էր: Պրոֆեսորը կարծում է, որ նկարիչները քաղաքականությամբ չեն զբաղվում, բայց ներկա իրավիճակում արվեստի բոլոր ճյուղերն առնչվում են քաղաքականությանը:

Իմ այն հարցին՝ կառանձնացնի՞ որևէ նկար, պատասխանեց՝ օրինակ, Ծիրանածորը, ուր ոչ մի նկարիչ չի եղել, ոչ մի հայ չի գնացել. այն գտնվում է Նախիջևանի, Պարսկաստանի, Հայաստանի սահմանագծին:

ՀՊՄՀ թանգարանի տնօրեն Ալվարդ Գրիգորյանն իր ելույթում ասաց. «Այսօր համալսարանի 100-ամյակի շրջանակներում ներկայացնում ենք մեր համալսարանի դասախոս, վաստակավոր նկարիչ, Հայաստանում և արտերկրում շատ ճանաչված պրոֆեսոր Լեմս Ներսիսյանի ստեղծագործական աշխատանքների ցուցահանդեսը: Իհարկե կա դպրոց, կա վարպետություն, բայց այցելուներին նկարներն առաջին հերթին գրավում են, որովհետև հոգու հետ են խոսում»:

Ներկաներին ողջունեց և բացման խոսքով հանդես եկավ ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատար Սրբուհի Գևորգյանը: Նա փաստեց, որ Լեմս Ներսիսյանը պարբերաբար առիթ է ընձեռում ըմբոշխնելու իր ստեղծագործությունները՝ հիշեցնելով 2019 թվականին նույն այս սրահում նրա «Հայաստանի հոգևոր կանթեղները» ցուցահանդեսը:

«Նկարները յուրահատուկ տրամադրություն են ստեղծել համալսարանի սրահում, և այդ տրամադրությունը ներդաշնակ էր դիպլոմներ ստացող շրջանավարտների տրամադրության հետ, որոնցից յուրաքանչյուրը փորձում է տրամադրություն ու հոգեկան կապ գտնել ամեն նկարի հետ,-ասաց Ս. Գևորգյանը:-Սյունիքն այսօր ավելի գերարդիական է, գերարդիական է տարածքային, արժեբանական, աշխարհագրական առումներով, որոնցից յուրաքանչյուրի հանդեպ նկարիչն իր ուրույն մոտեցումն ունի՝ այն կարևորելու, ներշնչելու, ներկայացնելու, և յուրաքանչյուրիս համար յուրովի Սյունիքին անդրադառնալու առումով:

Սյունիքը քո ներսում այն գույներով և տրամադրությամբ է, որով ողողված է և իշխում է այդ պահին, այն մի պահ թողնում է, որ լիցքաթափվես և զերծ մնաս այն տագնապներից, որոնք վերջին շրջանում մեզանում գերիշխում են»,-ասաց ռեկտորի պաշտոնակատարը:

Նա գեղանկարչին մաղթեց ստեղծագործական երևակայության սահմաններում իր համար կյանքի կոչի չբացահայտված գաղափարները՝ յուրաքանչյուրին փոխանցելով ժպիտներ, խաղաղություն և ես-ի վերագտնելու կարողություն:

Վերջում ելույթ ունեցավ գեղանկարիչը: Նա ևս մեկ անգամ խոսեց ցուցահանդեսի տեղեկատվական նշանակության մասին.«Սյունիքն այսօր ունի միջազգային հնչեղություն. ես անդրադարձել եմ դրան: Մեկուկես տարի ամբողջ Սյունիքն անցել եմ ոտքով, մեքենայով, որպեսզի ձեզ ներկայացնեմ «Սյունիքի միջանցք» հասկացողությունը և ընդհանրապես Սյունիք աշխարհը: Բավականին աշխատանք կատարեցի՝ 80 գործ, որից 60-ն է այստեղ ներկայացված: Ես փորձում եմ վիզուալ ներկայացնել մեր գեղեցկագույն աշխարհը: Սյունիքը մի աշխարհ է, որը մեր հարավային դարպասն է: Եվ ես հպարտ եմ, որ կարողացել եմ 60 աշխատանք ներկայացնել ձեզ»:

Լեմս Ներսիսյանի կարծիքով՝ ցուցահանդեսները գեղարվեստական առումով պետք է զգացմունքայնություն առաջացնեն, բայց այստեղ ոչ միայն գեղարվեստն է իշխում, այլև տեղեկատվական խնդիրը կա, այդ տրամադրվածությամբ է ներկայացրել:

Վերջում նկարիչն ասաց, որ ցուցահանդեսը նվիրում է կանանց, ու եթե Մեղրին չլիներ, ամբողջությամբ ծաղիկներ կներկայացներ՝ կանանց գովերգելու համար:

Ցուցահանդեսը համալսարանում կմնա երկու շաբաթ. վայելենք Լեմս Ներսիյան գեղանկարչի հոգու և մտքի գույները՝ կտավներից շողարձակող Սյունյաց աշխարհի ջերմությունն ամփոփելով մեր սրտերում:

Միլվա ԱՍՐՅԱՆ

Հայաստանի ազգային գրադարանում նշեցին մեծանուն գիտնականի 100-ամյակը



Դարեր շարունակ հայոց աշխարհում ծնվել են այնպիսի քաջազուններ, որոնք առանց կյանքը խնայելու պայքարել են հայրենիքը շենացնելու համար: Նրանց շարքին է դասվում սիրված մտավորական, հայ անվանի մատենագետ, լեզվաբան, գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի գերագույն խորհրդի պատգամավոր (1991-1995 թթ.), Հայաստանի Ազգային գրադարանի տնօրեն (1991-1995թթ.) Ռաֆայել Իշխանյանը:

Ծնվել է 1922 թվականի մարտի 9-ին, Երևանում: 1929-1939 թթ. սովորել է Կրուպսկայայի անվան միջնակարգ դպրոցում: Նույն տարում ընդունվում է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, սակայն 1940 թ. նրան զորակոչում են բանակ: Երիտասարդ զինվորն անցել է 1941թ. Հայրենական մեծ պատերազմի ամենածանր փորձությունների միջով: 1946 թ. նա վերադառնում և ուսումը շարունակում է ԵՊՀ-ում, որն ավարտում է 1949 թվականին:

Հատկանշական է, որ 1950-1954 թթ. սովորել է Մոսկվայի գրադարանային ինստիտուտի հեռակա բաժնում: Համալսարանական տարիներից սկսել է աշխատել Ալ. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանում որպես պարետ, ապա ավագ գրադարանավար, ենթաբաժնի վարիչ, այնուհետև բաժնի վարիչ: 1958թ. ստեղծել է Հայ գրքի մատենագիտության բաժինը, որը ղեկավարել է մինչև 1962 թ.:

1955-1962 թթ. գրադարանում աշխատելուն զուգահեռ, գրադարանային-մատենագիտական առարկաներ է դասավանդել Հայկական պետական մանկավարժական ինստիտուտի հեռակա կրթական համակարգում: Երկար տարիներ ժամանակակից հայոց լեզու, բարբառագիտություն, հայ գրականության լեզվի պատմություն է դասավանդել ԵՊՀ-ում:

Պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Ակսել Բակունց», և դոկտորական՝ «Ակնարկներ հայ նոր գրականության լեզվի պատմության» թեմաներով: Ստացել է դոցենտի, ապա պրոֆեսորի կոչում:

Խմբագրել է «Լուսավորիչ» լրագիրը:

Ռ. Իշխանյանը մեծ ներդրում է ունեցել նաև Արցախի ազատագրական պայքարում: 1991թ. Հայաստանի անկախացումից հետո ընտրվել է ՀՀ ազգային ժողովի պատգամավոր: Նա հայոց լեզվի մասին օրենքի նախագծի համահեղինակներից մեկն էր:

Ռ. Իշխանյանը պարգևատրվել է Հայրենական մեծ պատերազմի II աստիճանի շքանշանով, «1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմում հաղթանակի 20 տարին», Խաչատուր Աբովյանի անվան մեդալներով:

Երևանի №153 դպրոցը կրում է Ռաֆայել Իշխանյանի անունը:

1991-1995 թթ. Ռ. Իշխանյանը պաշտոնավարել է որպես Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն:

Ցավոք սիրված մտավորականը վախճանվեց 1995 թվականի փետրվարի 6-ին, Երևանում:

Ռ. Իշխանյանն անուրանալի ծառայություններ է մատուցել հայոց լեզուն, հայերեն խոսքը, հայ ժողովրդի պատմությունը անաղարտ պահելու գործում: Նրա գիտական հետաքրքրությունների շրջանակը բավականին ընդգրկուն է: Նրա հեղինակած ուսումնասիրություններն ու հոդվածները վերաբերում են հայոց լեզվին ու գրականությանը, հայոց լեզվի պատմությանը, ինչպես նաև քաղաքական թեմաներին, հրապարակախոսությանը և առհասարակ ազգային կյանքի զանազան իրողություններին:

Տպագրել է շուրջ վեց տասնյակ գրքեր, որոնց շարքում նաև շուրջ մեկ տասնյակ գրադարանագիտական ուսումնասիրություններ, ինչպես նաև՝ գրքույկներ, ուսումնական ձեռնարկներ, հեղինակել բազմաթիվ հոդվածներ, կատարել թարգմանություններ:

1993 թ.-ին Հայաստանի ազգային գրադարանի նախաձեռնությամբ Երևանում հրատարակվեց «Մատենագիտություն Ռաֆայել Իշխանյանի տպագիր աշխատությունների» արժեքավոր ուսումնասիրությունը, որը խմբագրել է Անահիտ Հարությունյանը: Մատենագիտության մեջ նյութերը դասակարգված են ըստ ժամանակագրական կարգի, ներառված է 772 հրատարակություն:

Մարտի 9-ին լրացավ սիրված մտավորականի ծննդյան 100-ամյակը: Այս առիթով հայ ընթերցասեր ու արվեստասեր հասարակության սիրված կրթօջախներից մեկում՝ Հայաստանի ազգային գրադարանում կազմակերպվեց մեծ գիտնականի գործունեությանն ու կյանքին նվիրված ձեռնարկ: Կազմակերպվել էր գիտնականի հրատարակված աշխատությունների, ինչպես նաև արխիվային փաստաթղթերի և հոդվածների ցուցադրություն:

Միջոցառմանը ներկա էին տարբեր սերունդների ու մասնագիտությունների ներկայացուցիչներ, գրադարանային ոլորտի աշխատակիցներ: Մեծանուն մտավորականին հանգամանալից ներկայացրեց Հայաստանի ազգային գրադարանի մատենագիտության և գրադարանագիտության բաժնի առաջին կարգի մատենագետ Գոհար Սարգսյանը:

Ականավոր գրականագետ, լեզվաբան, գրադարանագետ, մատենագետ, գրքագետ, աղբյուրագետ, հայ մշակույթի երախտավոր, բանասիրության դոկտոր, պրոֆեսոր Ռաֆայել Իշխանյանի ծննդյան 100-ամյա հոբելյանի առթիվ զեկուցողը ներկայացրեց նրա կյանքը և գործունեությունը, ինչպես նաև պատկառելի գիտամշակութային ժառանգությունը: Հայ մշակույթի, կրթության ու գիտության նվիրյալների կյանքի ու գործունեության համակողմանի ներկայացումն ու հավուր պատշաճի արժևորումն այսօր ավելի քան կարևոր նշանակություն ունի նաև ազգային ինքնության ու գաղափարախոսության ձևավորման և պահպանման տեսանկյունից. այս առումով կարևորվում է նաև Հայաստանի ազգային գրադարանի ազգանվեր առաքելությունը:

Գարիկ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Մասնակցեցին վերապատրաստման դասընթացներին

Մանկավարժական համալսարանի ռուսաց լեզվի ամբիոնի 15 դասախոսներ մասնակցեցին փետրվարի 28-ից մարտի 3-ը Երևանում կազմակերպված «Ժամանակակից լեզվաբանության ինտեգրատիվ ներուժը. անձ, հասկացույթ, խոսույթ» թեմայով դասավանդողների որակավորման բարձրացման դասընթացներին: Այն նախաձեռնել էին Մոսկվայի արտաքին տնտեսական և միջազգային կապերի վարչությունը և Երևանում «Մոսկվայի տուն» մշակութային կենտրոնը:

Դասընթացների վերապատրաստողները Ռուսաստանի Դաշնության Ա. Ս. Պուշկինի անվան ռուսաց լեզվի պետական ինստիտուտի լեզվաբանության ամբիոնի անվանի մասնագետներն էին՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Կարասիկը, Լեզվական քաղաքականության և միջազգային կրթության հետազոտությունների կենտրոնի ղեկավար, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Սվետլանա Կամիշովան և մեր հայրենակից, փիլիսոփայական գիտությունների թեկնածու Լևոն Սահակյանը:

ՀՊՄՀ ռուսաց լեզվի ամբիոնի վարիչ Նաիրա Դալյանի հրավերով վերջիններս Մանկավարժական համալսարանում մասնակցեցին կլոր սեղան-քննարկմանը: Գործնական խոսակցություն ծավալվեց երկուստեք կապերի ամրապնդման ուղիների շուրջ, ինչպես նաև լեզվական հիմնահարցերի, լեզուների փոխազդեցությունների և լեզվական տարբեր իրողությունների շուրջ, մասնավորապես քննարկվեցին երկլեզվության, արդի լեզվաբանության խնդիրները, ռուսերենի՝ որպես օտար լեզվի դասավանդման մեթոդիկայի նորարարություններն ու լեզվական բացերը:

«Այս դասախոսների հետ ես 10 տարի աշխատել եմ Մոսկվայում և նրանց հրավիրեցի Մանկավարժական համալսարան՝ կլոր սեղանի շուրջ ավելի ջերմ մթնոլորտում քննարկելու լեզվաբանության հետ կապված շատ խնդիրներ, որոնք արդի են նաև մեր իրականության համար, որովհետև մենք կարդում ենք այդ դասընթացները, և իհարկե դրանք մեզ համար շատ հետաքրքիր են,-ասաց պրոֆեսոր Ն. Դալյանը:-Մեզ համար պրոֆեսոր Կարասիկի դասախոսության մեջ շատ հետաքրքիր նորություններ կային ՝ կապված երկլեզվախոսության հետ, բայց մենք մեկ անգամ ևս համոզվեցինք, որ դասավանդման գործընթացը ճիշտ ենք վարում՝ կապված հենց լեզվաբանության հետ: Ինչ վերաբերում է ռուսերենին՝ որպես օտար լեզու՝ նոր մեթոդները մեզ մոտ կիրառվում են: Մենք համեմատեցինք մեր փորձը նրանց փորձի հետ: Դասընթացը նաև հետաքրքիր էր նրանով, որ առերես ձևաչափով էր. մենք հնարավորություն ունեինք հարցեր տալ և հասկանալ՝ ինչն է թերի մեզ մոտ, ինչը կարող ենք նորովի զարգացնել»:

Վերապատրաստման ողջ դասընթացը նվիրված էր արդի լեզվաբանության խնդիրներին և ռուսերենը որպես օտար լեզու դասավանդման մեթոդիկայի նորարարություններին:

Օտար լեզուների ֆակուլտետի մասնագետները համոզված են, որ կենտրոնը մեծապես ծառայում է իր նպատակին, այն է՝ երկու բուհերի գործակցային կապերի ամրապնդմանը գիտակրթական ասպարեզում:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

ՀԱՅՈՑ ԳՐԵՐԸ ԵՎ ՀԱՅ ԴՊՐՈՑԸ

➢3 12 տարի դպրոցում: Ավարտելուց հետո արդեն ստանում էին բարձրագույն կրթություն:

Զեկուցողը ներկայացրեց՝ ինչ կրթական ծրագրով են անցնում այստեղ սովորողները, և որ դեպքում կարող է շրջանավարտը ընդունվել եբրայական համալսարան:

Ամփոփելով՝ զեկուցողը հետաքրքիր պատմություն ներկայացրեց Թարգմանչաց վարժարանի հետ կապված. 1940-ից 1967 թվականներին Երուսաղեմի հայկական թաղամասը անցնում է Հորդանանի տիրապետության տակ, որոնց օրենքն արգելում էր տղաներին և աղջիկներին միասին սովորել նույն դպրոցում: Քանի որ հայ աղջիկները և տղաներն արդեն միասին էին կրթություն ստանում նույն շենքում, Հորդանանի կառավարությունը պահանջում էր առանձին շենքերում կազմակերպել նրանց կրթությունը: Սակայն սկսվում է վեցօրյա պատերազմը, և Իսրայելը նորից գրավում է ամբողջ քաղաքը, այդ թվում՝ հայկական թաղամասը: Փաստորեն Հորդանանի պատմության մեջ եզակի դեպք էր, երբ հակառակ երկրի օրենքին, հայ տղաներն ու աղջիկները սովորել են միասին:

Երկօրյա գիտաժողովի աշխատանքը շարունակվեց մասնախմբերում. զեկուցողները նոր ժամանակների դիտանկյունից ներկայացրին Մեսրոպ Մաշտոցի առաքելությամբ ու հայոց գրերով պայմանավորված հայ լեզվամշակույթի ամենատարբեր հիմնահարցերը՝ ծննդյան 1660-ամյակը նշանավորելով հայ դպրոցի ու նրա Ուսուցչի վարքի հանդեպ մեծագույն սիրո տուրքով:

Գիտաժողովի վերջում այցելեցին Օշական՝ ծաղիկներ խոնարհելու Մեծն Մաշտոցի շիրիմին:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Բաց դասախոսություն՝ «Արարչագործության փիլիսոփայությունը և Հայաստանը» թեմայով

ՀՊՄՀ Պատմության և հասարակագիտության հասարակագիտության ամբիոնը մարտի 15-ին նախաձեռնել էր բաց դասախոսություն՝«Արարչագործության փիլիսոփայությունը և Հայաստանը» թեմայով:

ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանը կարևորեց դասախոսությունների անցկացումը, հերթական բաց դասախոսության թեման համարելով հետաքրքիր, որը «կարծես չափից ավելի գոյաբանական, իմաստաբանական առումով վիճահարույց է». այն «յուրաքանչյուրի համար հարցադրումների հսկայածավալ դաշտ է ստեղծում, որոնց մի մասը վերաբերում է գիտությանը, մյուս մասը՝ կրոնագիտությանը, հոգեբանությանը»:

«Եվ երբ անդրադարձ ենք կատարում նման խնդիրներին՝ հատկապես ճգնաժամային իրավիճակներում, հասկանում ենք, որ, այնուամենայնիվ, արարչագործության ուղղորդումներն ի սկզբանե մեզ տանում են դեպի կրոնագիտություն, սակայն մշակութաբանության երկու հիմնական ոլորտներն են՝ գիտությունը և աստվածաբանությունը, որոնք խնդիր են դնում ձևավորելու աշխարհահայացք:

Մեր աշխարհայացքի ձևավորման վրա բազմաթիվ և բազմապիսի գործոններ են ներազդում: Հենց այս հիմնախնդրի հետ կապված այն շեշտադրումը, որը գոյություն ուներ հունական դաշտում՝ հստակ դիֆերենցել գիտելիքը և հավատը, այնուամենայնիվ, միջնադարում մենք տեսնում ենք, որ ձևափոխված քրիստոնեական դոկտրինի շրջանակում, բացարձակապես մոնոպոլիայի ենթարկված աշխարհայացքի մի ձևաչափ է»,-ասաց Ս. Գևորգյանը՝ հավելելով, որ փիլիսոփայության դիտանկյունից բավականաչափ խնդրահարույց և գոյություն ունեցող տարբեր տեսություններով և մոտեցումներով հանդերձ իր համար էլ բավականին հետաքրքիր է՝ հասկանալու, թե որոնք են այն հիմնական դրույթներն ու թեզերը, որ ընկած են աշխարհայացքի ձևավորման այս ոլորտում:

«Մենք պիտի ունենանք երևակայություն և բացահայտենք մեր պատմական կապերը,-ասաց Լևոն Շիրինյանը,- մենք խնդիր ունենք գտնելու Հայաստանի տեղը համաշխարհային աշխարհակարգում, ինչպես նաև Հայաստանը ներկայացնել այս սերնդին»:

Հետխորհրդային հրատարակություններից մեկից մեջբերելով փիլիսոփաներ Պ. Ալեքսեևի և Ա. Պանինի կարծիքը, թե 20-րդ դարի 30-50-ական թվականներին տարածված կարծիքը՝ իբր «հավատը՝ կրոնը դեմ է գիտելիքին, սխալ կարծիք է և որ կրոնական գիտելիքը տարբերվում է գիտելիքի այլ տեսակներից իր հիմնական բովանդակությամբ, բովանդակության իմացության ձևով և միջոցներով»:

Ըստ Լ. Շիրինյանի «հարցի նման դրվածքը լայն հեռանկարներ է բացում հայ ժողովրդի և Հայաստանի քաղաքակրթական առաքելության ու քաղաքական պատմության հիմնախնդիրների ուսումնասիրման ոլորտում՝ պատմափիլիսոփայական ընկալման տեսանկյունից»:

Զեկուցողն ընդգծեց, որ մարքսիստական (խորհրդային) պատմափիլիսոփայության կաղապարների հաղթահարումով է պայմանավորված Հայաստանի արարչագործական ծագումը բացահայտելու խնդիրը:

Նա մեջբերեց տարբեր փիլիսոփաների դրույթները՝ դրախտի երկիր Հայաստանի մասին, մասնավորապես Պրուսիայի արքունի դիվանապետ Մաթյուրեն լա Կրոզի հայտնի ձևակերպումը. «Մեծապես նշանակալից եմ համարում, որ հայերեն լեզուն, որ այնքան տարբեր է եբրայերենից և արաբերենից, լեզուն է այն երկրի, որտեղ անկասկած Մովսեսը հիմնել է Երկրավոր Դրախտը»:

Ռուս պատմաբան Սերգեյ Գլինկան էլ գրել է.«Հայ ժողովրդի պատմությունը միահյուսված է հին աշխարհի գրեթե բոլոր ժողովուրդների պատմության հետ: Ըստ բիբլիական և ժողովրդական ավանդությունների, հայկական լեռնաշխարհում է գոյացել մարդկային ցեղի երկրորդ բնօրրանը»:

Լ. Շիրինյանը խոսեց երկրների փափուկ և կոշտ ուժերի մասին՝ ընդգծելով, որ Հայաստանը նախ պետք է ունենա փափուկ ուժ՝ քաղաքամշակութային գրավչություն՝ պետության ավանդույթներ և մշակութային խորհրդանիշներ, որոնք սերնդեսերունդ փոխանցվում են և դառնում առավելություններ:

Լ. Շիրինյանն ուսանողներին հորդորեց ուսումնասիրել փիլիսոփայություն, որի լեզուն արարչագործության լեզուն է, և առանց որի չեն կարող ունենալ դիալեկտիկական տրամաբանություն, դառնալ մասնագետ:

«Մենք պետք է մեր երկիրը, մեր հզորությունը, մեր կերպարը փոխենք, հակառակ դեպքում կոչնչանանք»,-ասաց բանախոսը՝ հիշելով՝ մեր տարածաշրջանն այդպիսին է, մեր պատմությունը՝ դաժան:

«Եթե օրենքները չեն բխում իրավունքից՝ դրանք հակապետական են»,- բարձրաձայնեց Լ. Շիրինյանը՝ հղում անելով ներկա դատաիրավական համակարգի անարդարություններին:

Բանախոսը փաստեց՝ արարչագործության թեման ընտրել է, որովհետև այստեղ մենք ուժեղ ենք, մենք աշխարհին կարող ենք ներկայանալ որպես քաղաքակրթության օրրան, և մենք պիտի վերակազմակերպվենք: Նա ուսանողներին խորհուրդ տվեց կարդալ Ռուբեն Տեր-Մինասյանի գործերը և ամփոփեց.«Հայաստանը կարող է կամ ամբողջական լինել կամ չլինել»:

«Որպեսզի սիրահարվենք մեր հայրենիքին ու աշխարհագրությանը՝ մենք պետք է շատ արագ կարողանանք տիրանալ փափուկ ուժին, չվախենանք և գնանք դեպի արարչագործություն և կունենանք Երկիր Դրախտավայրի մասին պատկերացում»,-ասաց փիլիսոփա-քաղաքագետ Լևոն Շիրինյանը՝ հավելելով, որ դրա համար պետք է իմանալ՝ ինչ է Հայաստանը:

Սիլվա ԱՍՐՅԱՆ

Մահացել է Գագիկ Մանասյանը

Կյանքի 66-րդ տարում մահացել է Մանկավարժական համալսարանի պարարվեստի մանկավարժության ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների դոցենտ Գագիկ Մանասյանը:

Գագիկ Մանասյանը ծնվել է 1955 թվականին, 1973-1979 թթ. սովորել է ԵՊՀ Բանասիրական ֆակուլտետում:

1979-1981թթ. եղել է Աբովյանի գործկոմի մշակույթի բաժնի վարիչ, 1981-1984 թթ-ին՝ Հայաստանի գրողների միության գեղարվեստական գրականության պրոպագանդայի բյուրոյի տնօրենի տեղակալ, ապա «Անդրադարձ», ՀՀ ՊՆ «Հայ զինվոր» թերթերի հիմնադիր-խմբագիր, Աբովյանի շրջխորհրդի գործկոմի մշակույթի վարչության պետ, Կոտայքի մարզպետարանի մշակույթի և կրթության վարչության պետ: 2001-2007 թթ. Երևանի քաղաքապետարանի մշակույթի վարչության պետի տեղակալ, իսկ 2002-2006 թթ. ՀՀ մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի ղեկավարն էր:

2007 թվականից մինչ օրս Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի տնօրեն էր: Նույն թվականից մինչ օրս դասավանդում էր ՀՊՄՀ պարարվեստի մանկավարժության ամբիոնում:

Գագիկ Մանասյանը ակտիվորեն զբաղվում էր նաև հասարակական գործունեությամբ. ՀՀ Հանրային խորհրդի անդամ էր՝ մշակույթի ենթահանձնաժողովի նախագահ, «Հայի միտք» համահայկական հեռուստատեսային մասնագիտական ակումբի նախագահն էր, Երևանի գեղարվեստի ակադեմիայի և Գաբրիել Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնի խորհրդի անդամ:

Գործընկերների խոսքով՝ նրա ապրած ողջ կյանքը համակ նվիրում էր հայ մշակույթին և ազգային հոգևոր ժառանգությանը. «Նա մարդասիրության և ընկերասիրության բացառիկ օրինակ էր մեզ համար: Գագիկ Մանասյանն անգնահատելի ծառայություն է մատուցել արվեստի և մշակույթի ուղին բռնած հազարավոր անհատների, ովքեր այսօր խորապես վշտակցում են նրա ընտանիքին և բոլոր հարազատներին: Գագիկ Մանասյանի ինքնանվիրումով ապրած կյանքը, նրա ողջ կենսագրությունը անջնջելի հետք են թողնելու գալիք սերունդների հոգիներում»:

Գագիկ Մանասյանը հայ մշակույթի անխոնջ պահապանն էր, անզուգական մտավորական, վաստակաշատ մանկավարժ, արհեստավարժ ղեկավար, հարգված մարդ թե՛ իր ղեկավարած կոլեկտիվներում, թե՛ հանրության շրջանում:

ՀՀ արվեստի վաստակավոր գործչին գործընկերներն ու ուսանողները կհիշեն որպես պատվարժան մարդու, սիրելի ընկերոջ, անզուգական մտավորականի:

Մանկավարժական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմը ցավակցում է Մանասյանների ընտանիքին՝ Գագիկ Մանասյանի անժամանակ մահվան կապակցությամբ:

Որպես գիտնական, դասախոս ու մտավորական՝ Գագիկ Մանասյանը սիրված ու հարգված անձնավորություն էր թե՛ իր ղեկավարած կոլեկտիվներում, թե՛ հանրության շրջանում:

ԱՊԱԳԱ ԼՐԱԳՐՈՂԻ ԷՋ

Մահ իմացյալ՝ անմահություն

2019 թվականի հունվարի 24-ին զորակոչվեց բանակ: Ծառայում էր Մարտունիում, ականանետային հաշվարկի հրամանատար էր: Լավ ծառայության համար արժանացել է «Լավագույն զինվոր-մարզիկ» և «Քաջարի մարտիկ» շքանշանների: Բանակում էլ աչքի էր ընկնում իր սպորտային ունակություններով, զինվորներին մարզում էր, գումարտակի վոլեյբոլի ավագն էր: Մինչև սեպտեմբերի 27-ն ամեն ինչ խաղաղ էր…

«Սեպտեմբերի 27-ին բակում լսեցի պատերազմի մասին լուրը, բայց լուրջ չընդունեցի: Երբ մի քանի անգամ զանգեցի Տիգրանիս, ու հեռախոսն անհասանելի էր՝ անհանգստացա, սրտումս վախ առաջացավ»,-պատմում է Արփինեն:

Երկու օր չեն կարողացել կապ հաստատել Տիգրանի հետ: Սեպտեմբերի 29-ի առավոտյան զանգել ու ասել է, որ ինքը լավ է, ուղղակի հեռախոսակապն էր վատը: Այդ օրն էլ կարճ է տևել զրույցը:

«Շատ երազանքներ ուներ, բնավորությամբ անհամբեր էր, ամեն ինչով հետաքրքրված, փորձում էր իմանալ հնարավոր ամեն բան, ոչինչ բաց չէր թողնում: Ծառայությունից հետո որոշել էր սպորտի խմբակ բացել»,-շարունակում է քույրը:

Նրա խոսքով՝ շինարար չէր, նման գործ չէր արել, բայց բանակում, ընկերներով մի քանի ամսում մատուռ կառուցեցին, անվանեցին Սուրբ Սարգիս: «Մատուռի համար նկարներ էր ուզում, վերջում խնդրեց ուղարկել Հիսուսի նկարը՝ 12 առաքյալների հետ, բայց չհասցրինք ուղարկել: Փոխարենն իր կողքին դրեցինք, իսկ մատուռը քանդեց թշնամին»,-հուզվում է Արփինեն:

Բանակում գրել էր 10 բանաստեղծություն, նրանցից մեկում նշել էր, թե ինչ է ուզում դառնալ, ու վերջում ավելացրել. «Ինչ էլ դառնաս՝ կարևորը Մարդ լինելն է»: Երբ քույրը գնացել է եղբորը տեսակցելու՝ այդ բանաստեղծությունների տետրը տվել է նրան ու ասել, որ պահի այնքան ժամանակ, մինչև վերադառնա, բայց…

«Շատ էի սիրում իրեն, ինքն իմ յուրահատուկն էր, իմ պուճուրն իր սերն իմ հանդեպ ցույց էր տվել զինվորական կտորի վրա մեծ սիրտ պատկերելով,-արցունքները հազիվ թաքցնելով ասում է քույրը:-Հենց սկզբից ես այնպիսի զգացողություն ունեի, որ Տիգրանիս էլ չեմ տեսնելու: Պատերազմի օրերին առաջինն ինձ էր զանգում՝ առավոտ շուտ, իսկ երեկոյան, եթե չէր կարողանում զանգել, գրում էր ռուսերեն. ДОБРОЙ НОЧИ«ЛЮБИМАЯ»,-պատմում է Արփինեն:

Վերջին անգամ եղբոր հետ խոսել է հոկտեմբերի 31-ին: Տիգանը խնդրել է, որ մայրիկին փոխանցի՝ ուշ կզանգի, բայց ժամը 12-ին ստացել է մահացու վիրավորում ականի բեկորի պայթյունից:

Մարտական ընկերներից Իգնատ Մարտիրոսյանը հիշում է Տիգրանի հետ անցկացրած ծառայության ամեն օրը. «Սերժանտ էր, հաշվարկի հրամանատար և իր գործին քաջ գիտակ ու հրամանները լավ կատարողներից մեկը: Միասին մարտական հերթափոխներ ենք իրականացրել, ու այդ ամենն էլ մեզ մտերմացրել է, եղբայրական սիրով կարծես կապված լինեինք: Բավականին ցուրտ օրեր ենք անցկացրել դիրքերում, որ անգամ թեյը չէր տաքանում,-պատմում է Իգնատն, ապա դառնությամբ հիշում,-վիրավոր ժամանակ գրկումս էր: Փորձեցինք կյանքը փրկել, բայց չկարողացանք: Մինչ օրս նրա արյան հոտը զգում եմ ձեռքերիս ու շուրթերի վերջին մրմունջը: «Տղե՛րք, ինձ մենակ չթողնե՛ք, խոսե՛ք հետս …,-ասաց ու փակեց աչքերը…: Գոռում էի անզորությունից: Մի քանի օր առաջ էր մկրտվել ու ընդունել էր Քրիստոսին իր մեջ ու նահատակվեց Քրիստոսին իր մեջ ունենալով»,-պատմում է մարտական ընկեր Իգնատ Մարտիրոսյանը:

Տիգրանի և շատ ընկերների մահը նրան հանգիստ չի տալիս... «Հաճախ ինձ մեղադրում եմ, որ ես ողջ եմ, իսկ Տիգրանը չկա: Չեմ կարողանում նկարագրել Տիգրանի այդ վեհ քայլը՝ նա կյանքը տվեց հանուն հայրենիքի, արեց դա իմ, ձեր և հանուն հայ ազգի խաղաղության ու փրկության: Գիտակցաբար արեց, որովհետև «Մահ չիմացյալ մահ է, մահ իմացյալ՝ անմահություն»,-ասում է Իգնատը:

Պատերազմի օրերին Տիգանը 3 տանկ է խոցել, մի քանի զինվորական մեքենա: Թեժ օրերին, երբ հարազատներից մեկը խորհուրդ է տվել հնարավորության դեպքում փախչել, Տիգրանը շատ կտրուկ է պատասխանել, որ իր դիրքում շատ տղաներ են զոհվել և ինքը փախչող չէ:

Տիգրան Գալստյանը հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով:

«Միակ ցանկությունս է, որ հետ բերենք մեր կորցրած տարածքները, որ կարողանամ գնալ Տիգրանիս անմահացած վայրը, գրկել այն հողը, որին նվիրեց ամենաթանկը՝ կյանքը»,- մեզ հետ զրույցը եզրափակում է Արփինե Գալստյանը:,

Վիոլ ՈՍԿԱՆՅԱՆ
ՀՊՄՀ հեռուստալրագրության բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի

«Արվեստը պետք է զգալ, ոչ թե հասկանալ»,- ասում է Մերի Եփրեմյանը



Հայաստանի նկարիչների միության անդամ Մերի Եփրեմյանը նկարել սկսել է մանուկ հասակից: Նկարչուհին դժվարանում է իրեն բնութագրել, գերադասում է, որ իր մասին ոչ թե ինքն, այլ ուրիշները խոսեն:

Նպատակասլաց ու արագ որոշումներ կայացնող մարդ է, որը սիրում է ստեղծագործել ազատության մեջ: Մերին մասնագիտության ընտրության հարցում չի տատանվել, իրեն որևէ այլ ոլորտում երբեք չի էլ պատկերացրել: Նկարչուհին Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի շրջանավարտ է: Մագիստրատուրայի շրջանակներում, փոխանակման ծրագրով մեկնել է Սանկտ Պետերբուրգի Շտիգլիցի ակադեմիա: «Շտիգլիցում ուսանեցի գերազանց, վերադարձա հանրապետություն՝դիպլոմային աշխատանքս պաշտպանելու. այն համարվեց լավագույնն, ու Հայաստանի նկարիչների միության անդամ դարձա»,- պատմում է Մերին:

Գեղանկարչուհին 2012 թվականից ցուցահանդեսներ է ունեցել: Մեծ արձագանք է ստացել հատկապես գրաֆիկայի առաջին անհատական ցուցահանդեսը՝ 2017 թվականին:

Մերի Եփրեմյանը մեզ հետ զրույցում խոսեց նաև Սանկտ Պետերբուրգում և Բելառուսում վերջերս ներկայացված ցուցահանդեսների մասին. «2021 թվականին Բելառուսում միջազգային ամենամյա ցուցահանդես կայացավ՝ Բիենալե, որին մի շարք երիտասարդ նկարիչներ էին մասնակցում Շվեդիայից, Էստոնիայից, Ղազախստանից, Ռուսաստանից և այլ երկրներից: Ես պատիվ ունեցա ներկայացնելու Հայաստանը և 17-րդ դարի շքեղ ցուցասրահում միայն ինձ շնորհվեց պատվոգիր,- ոգևորությամբ նկատում է նկարչուհին՝ հավելելով,- տպավորություններս բառերով անհնար է նկարագրել»:



8 երկրի ներկայացուցիչների շարքում Մերի Եփրեմյանի կտավը միակն էր, որ արժանացավ «Լավագույն աշխատանք» մրցանակի:

Մերին երազկոտ է և ունի բազմաթիվ երազանքներ, որոնց մեծ մասն արդեն կատարված է համարում՝ ընդգծելովգ «Այսօր էլ քայլ առ քայլ մյուս երազանքներիս հետևից եմ գնում: Ես ինձ երջանիկ մարդ եմ համարում»:

Ինչպես զրույցի ընթացքում նշեց նկարչուհին՝ցանկացած միջավայր նկարելու ցանկություն է ստեղծում, սակայն բնությունն ու սեփական արվեստանոցը առանձնահատուկ են իր համար:

Մերի Եփրեմյանը նաև մոդելինգով է զբաղվում. «Սիրում եմ աշխատել տեսախցիկի հետ, ոչ ստանդարտ, ոճային կերպարներ ստանալ հագուստից ու ամեն ինչին որպես արվեստի մոտենալ»,- նշում է Մերին, որն իր այդ ձգտումը համարում է իր առանձնահատկությունը:

Հայաստանի նկարիչների միության անդամը 2013 թվականից մինչ այսօր դասավանդում է արվեստի դպրոցներում:

Իր սաներին նա հորդորում է. «Պետք է արվեստն անսահման սիրել ու կոչմանը հավատարիմ մնալ՝ ինչքան էլ փորձություններով հարուստ լինի ուղին: Նկարչությունն անսահման խորհրդավոր ու խոր աշխարհ է»:



Մերին վստահ է՝ արվեստը պետք է զգալ, ոչ թե հասկանալ…:

Լիլիթ ԱՃԵՄՅԱՆ
ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի Լրագրության բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի

ՉԱՐԵՆՑՈՎ ԻՄԱՍՏՆԱՑԱԾ

«Հեռավոր մեկի անրջանքն եմ սուտ՝
Նետված աշխարհի անսուտ երազին» խորագիրն էր կրում Եղիշե Չարենցի ծննդյան 125-ամյակին նվիրված միջոցառումը Երևանի Ալ. Շիրվանզադեի անվան № 21 հիմնական դպրոցում:

Եղիշե Չարենցը իր մտերիմ ընկերներ Ակսել Բակունցի, Գուրգեն Մահարու հետ անկեղծ զրույցի էր բռնվել: Նրանք պատմում էին իրենց կյանքի, մասնագիտության, բախտի, վախերի, հալածանքների, սերերի, պոեզիա դարձած ցնորքի մասին…

Անգնահատելի հուշեր էին պատմում Չարենցի ընկեր և բարեկամ Ռեգինա Ղազարյանը, Հարդագողի ճամփորդի կապուտաչյա ցնորք Արփենիկ Աստվածատրյանը, չարենցյան ցավից ու տառապանքից պոկված ու նրան երջանիկ հայր դարձրած Իզաբելլա Կոդաբաշյանը:

Չարենցյան պոեզիայով խանդավառ պատանիների շուրթերից հնչում էին աղոթք դարձած բանաստեղծությունները, հրաբխի պես ժայթքող հեռացումի խոսքերը, մեզ մտքի հունդից զրկող, արյուն ու արցունք սփռող չարագործի մասին տողերը:

Դահլիճում քարացած լռության մեջ լսելի էր քաղաքի վրա մթին ամպի պես նստող տրտմությունը՝ «Անվերնագիր», ծիերի դոփյունը…

Կյանքը շարունակում է իր հավերժական երթը, շարունակվում է նաև մեր մեծերի

կյանքը, նրանց պատգամները, իմաստնությամբ շաղախված խորհուրդները: Ու քանի որ հավերժ է նրանց երթը, պիտի հնչեր Նաիրի երկրին փառաբանող երգը, պիտի հնչեր անմահ Կոմիտասի ձայնը, պիտի հնչեր Չարենցի երազած մայրաքաղաքը՝ մեր չքնաղ Երևանը գովերգող երգը, պիտի բացվեր մեր անուշահամ մրգերով լի չրահանդեսի սեղանը, ճիշտ այնպիսին, ինչպիսին սիրում էր մեծ բանաստեղծը՝ Եղիշե Չարենցը:

Գոհար ՀԱՅՐՈՒՆԻ
Հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի

ԴԻՄՈՐԴԻՑ՝ ՈՒՍԱՆՈՂ

Ապագա դիմորդների համար մեծ նշանակություն ունեն այնպիսի հանդիպումները, որոնց ընթացքում հնարավորություն կունենան լսել իրենց հետաքրքրող համալսարանների մասին, ծանոթանալ հնարավորություններին և առավել հստակ կողմնորոշվել ապագա մասնագիտության և բուհի ընտրության հարցում:

Հենց այդ նպատակով էլ կազմակերպվել էր «Future Up. դիմորդից ուսանող» կոնֆերանսը, որին մասնակցեց նաև ՀՊՄՀ ուսանողական խորհուրդը:

Կոնֆերանսի ընթացքում ուսանողական խորհրդի անդամներից կազմված խոսնակների թիմը ապագա դիմորդներին ծանոթացրեց Մանկավարժական համալսարանին: Դիմորդներին ներկայացվեց ՀՊՄՀ ֆակուլտետները, Erasmus+ ծրագիրը, համալսարանի կողմից իրականացվող ծրագրերը, Ուսանողական խորհուրդը, ինչպես նաև համալսարանի առանձնահատկությունները:

Լինելով միակ բուհը, որն ունի ժեստերի լեզվի դասընթաց՝ կամավորական սկզբունքով, մեր ուսանողները դիմորդներին ներկայացրին նաև դասընթացի մանրամասները, իսկ ակումբի պատասխանատու Արեն Ալավերդյանը մասնակիցներին և մյուս համալսարանների ներկայացուցիչներին սովորեցրեց ժեստերի լեզվով մի քանի բառ:

Համալսարանի ուսանողական խորհրդի նախագահ Պարույր Գալստյանը մեզ հետ զրույցում նշեց, որ նմանատիպ ծրագրերը խթան են հանդիսանում մանկավարժական հարյուրամյա բուհի առավել ակտիվ գործունեության համար և դիմորդներին հնարավորություն տալիս իմանալ, որ մանկավարժ կերտող բուհը չի պատրաստում միայն ուսուցիչներ:

Մարիամ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՊՄՀ ՈՒԽ լրատվական հանձնաժողովի նախագահ

ԵՐԲ ԲՈԼՈՐԸ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԷԻՆ՝ ԱՆԿԱԽ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻՑ

Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետն արդեն երրորդ անգամ կազմակերպում է «Մտագրոհ» ինտելեկտուալ խաղը: Այս անգամ խաղն անցկացվեց «Շիրակացու ծեմարան» միջազգային գիտակրթական համալիրում: Խաղի ընթացքում վիճակահանության արդյունքում ձևավորվեցին հինգ թիմեր՝ կազմված Նիկողայոս Տիգրանյանի անվան №14 հատուկ դպրոցի և Շիրակացու ծեմարանի աշակերտներից, ինչպես նաև ՀՊՄՀ ուսանողներից:

Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ Մադլեն Մինասյանը ողջունեց ներկաներին՝ ասելով. «Արդեն մեկդարյա պատմություն ունեցող Մանկավարժական համալսարանի հոբելյանն է այստեղ միավորել բոլորիս»:

Նա կարևորեց համալսարանի գործունեությունը և դպրոցի հետ համագործակցությունը՝ լիահույս, որ օրը կարևոր և հիշարժան կլինի երկուստեք:

Այնուհետև սկսվեց խաղը, որի ընթացքում ելույթներ ունեցան ծեմարանի և №14 դպրոցի սաները, ինչպես նաև մեր համալսարանի ուսանողները:

Խաղն ընթացավ գրեթե հավասար պայմաններում, բոլոր թիմերն էլ ցուցաբերեցին լավ արդյունքներ. երկու փուլից բաղկացած խաղում չեղան պարտվողներ:

Ֆակուլտետի դեկան Սիրանուշ Կարապետյանը շնորհակալություն հայտնեց բոլոր ներկաներին. «Այսօր մենք գնում ենք համընդհանուր ներառման, սակայն դա ակնառու կլինի այն ժամանակ, երբ ամեն բան արվի սիրո և հավասարության հենքով:

Այսօր միևնույն թիմում խաղում էին մասնակիցներ, որոնցից շատերն ունեին նաև ներառական խնդիրներ, սակայն մենք բոլորս զգացինք, որ մարդկային հնարավորություններն անսահման են, իսկ ներառականությունը սեփական գիտելիքներով կիսվելու, միմյանց աջակցելու պատրաստակամությունն է»:

Դեկանը հավելեց նաև, որ այսօր էլ ֆակուլտետում սովորում են ներառական տարբեր խնդիրներով ուսանողներ, որոնք լավագույններից են և փայլում են իրենց գիտելիքներով:

Այսպիսով, ողջ խաղի ընթացքում տիրում էր յուրահատուկ մթնոլորտ, երբ միասնական էին բոլորը՝ անկախ առկա խնդիրներից:

Միջոցառման ավարտին շնորհակալագրեր տրվեցին Շիրակացու ծեմարանին և №14 հատուկ դպրոցին, իսկ մասնակիցները պարգևատրվեցին ներառականության մասին գրքերով:

Մարիամ ՍԱՐԳՍՅԱՆ
ՀՊՄՀ ՈՒԽ լրատվական հանձնաժողովի նախագահ

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպագրատանը:
Հասցեն՝ Արշակունյաց 2
Տպաքանակը՝ 1800 օրինակ: Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համաձայնության արգելվում է: Հղումը պարտադիր է: Թերթը տարածվում է անվճար:
Հանձնված է տպագրության 22.03.2022 թ.

Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝ www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Պետրոս ՎԱՐԴԱՆՅԱՆԻ
Համարի պատասխանատու՝ Սիլվա ԱՍՐՅԱՆ